



ԱՄԽԻԷ



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՄՆԴԻԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գիտե՞ք արդյոք, որ ...

Մնդիկը լայն կիրառություն ունի կենցաղային տարբեր սարքերի արտադրությունում: Այդպիսի սարքերից սնդիկը կարող է արտազատվել շրջակա միջավայր, երբ դրանք կոտրվում են կամ ոչ պատշաճ ձևով հեռացվում: Մնդիկը, թափվելիս, ներծծվում է տարբեր նյութերի մեջ և, ժամանակի ընթացքում գոլորշանալով, ազդում է մարդկանց առողջության վրա: Տեղեկացված լինելով սնդիկ պարունակող ապրանքների ու նյութերի և դրանց հետ վարման կարգի մասին, կարող եք սահմանափակել առողջության համար սնդիկի ազդեցության հետ կապված վտանգները: Ընդհանուր գործածության շատ ապրանքներ հաճախ ունենում են պարզ և բնապահպանական առումով անվտանգ այլընտրանքներ:

Ո՞րն է մարդու առողջության համար սնդիկի վտանգավորությունը

Մնդիկը չափազանց թունավոր նյութ է: Այն մարդու օրգանիզմ հաճախ ներթափանցում է, երբ մարդը ներշնչում է սնդիկի գոլորշիները, որոնք գուրկ են հոսից: Մնդիկի նույնիսկ փոքր քանակների ազդեցությունը կարող է վտանգավոր լինել, մասնավորապես, հղի կանանց և երեխաների համար՝ սնդիկը թափվելու պահին և դրանից 30 րոպե անց: Հետևաբար, խորհուրդ է տրվում դեպքի վայրից հեռանալ՝ մինչև աղտոտված նյութի վերջնական մաքրումը:

Մնդիկ պարունակող արտադրանքներ

Ջերմաչափեր



Ջերմակարգավորիչներ




Մաշկը սպիտակեցնող քսուքներ



Մանկական խաղալիք-կոսմետիկական միջոցներ



Կոմպակտ ֆլուորեսցենտային լամպեր



Ցերեկային ֆլուորեսցենտային լամպեր

Ընտրությունը Ձերն է: Դուք հնարավորություն ունեք գնել սնդիկ չպարունակող ապրանքներ

Մտդիկային ջերմաչափի այլընտրանքներից են թվային ջերմաչափերը, որոնցով կարելի է չափել մարմնի ջերմաստիճանը՝ այն դնելով բերանի խոռոչում, հետանցքում կամ թևատակը:



Սպիրտային ջերմաչափը կարելի է օգտագործել ինչպես երեխայի լոզանքի ջրի, այնպես և դրսի ջերմաստիճանը չափելու համար:



Ճնշումը չափելու համար ընտրեք անվտանգ սֆիզոմանոմետր:



Այժմ ծրագրավորվող էլեկտրոնային ջերմապահպանիչները և ոչ ավտոմատ ջատ ջերմապահպանիչներ սնդիկ չեն պարունակում:



Լսողության ուժեղացման սարքերի համար, որպես սնդիկից ազատ այլընտրանք, կարող են օգտագործվել օդա-ցինկային մարտկոցները: Գործածությունից դուրս գալուց հետո, դրանք պետք է առանձին հավաքել և օգտահանել: Աղբավայրում հայտնվելու դեպքում, դրանք կարող են առաջացնել հողի, ստորերկրյա ջրերի և օդի աղտոտում:



Ատամների լիցք կատարելիս ճշտեք՝ լցանյութը սնդիկ պարունակում է, թե՛ ոչ: Հայաստանում ատամնաբույժները հրաժարվել են ատամի ամալգամից, սակայն նախընտրում են օգտագործել այնպիսի <<սպիտակ>> լցանյութեր, ինչպիսին խեժային հիմքով խառնուրդն է:



Ֆլուորեսցենտային լամպերի փոխարեն օգտագործեք լուսադիոդային լամպեր: Դրանք քիմիական առումով անվտանգ են, քանի որ սնդիկ չեն պարունակում:

<<Հայ կանաչք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> (ՀԿՀԱԱՇՄ) ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում Բնության պահպանության շվեդական կազմակերպությանը (ԲՊՇԿ) և Եվրոպական հանձնաժողովին (ԵՀ) սույն տեղեկատվական թերթիկի ստեղծման հարցում Եվրոպական բնապահպանական բյուրոյի / Ջրո սնդիկ աշխատանքային խմբի միջոցով ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար: ՀԿՀԱԱՇՄ կազմակերպությունը սույն փաստաթղթի բովանդակության միակ պատասխանատուն է: ԲՊՇԿ - և և ԵՀ - ն պատասխանատու չեն փաստաթղթում պարունակվող տեղեկատվության ցանկացած օգտագործման համար: